ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ (ՊԱՅՄԱՆԱԳԻՐ)

ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «01» մարտ 2024թ.

«Հայկական Ծրագրեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ նաև Կատարող)՝ ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի, ով հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա, Կատարողին պատկանող բիզնեսի կառավարման և/կամ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերից և դրանցով պայմանավորված Կատարողի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող ցանկացած իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի առաջարկում է սույն հրապարակային օֆերտայի ակցեպտավորմամբ (ընդունմամբ) կնքել Համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ Պայմանագիր ստորև նշված պայմաններով.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Պայմանագրում, դրան կից Հավելվածներում, ինչպես նաև Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրերում ներքոնշյալ բառերն ու արտահայտություններն ունեն ստորև նշված իմաստը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրի բովանդակությունից բխում է այլ բան:

Օֆերտա՝ Կատարողի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կազմված և Կայքում հրապարակային ներկայացված սույն փաստաթուղթը, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող Գնացուցակը, որը հասցեագրված է ցանկացած անձի և չի պահանջում գրավոր կարգով ստորագրում: Օֆերտան բացառապես վերաբերում է կանխավճարային ծառայություններին:

Պայմանագիր՝ Պատվիրատուի կողմից Օֆերտայի՝ ամբողջ ծավալով և անվերապահորեն ակցեպտավորման (ընդունման) միջոցով Կատարողի և Պատվիրատուի միջև կնքված սույն համաձայնությունը, ինչպես նաև Պայմանագրի բոլոր հավելվածները, դրա վերաբերյալ կնքված համաձայնագրերը, փոփոխությունները և լրացումները, Օֆերտայի (Պայմանագրի) անբաժանելի մասը կազմով Գնացուցակը, որոնք պարունակում են Օֆերտայով նախատեսված և/կամ Կատարողի կողմից սահմանված այլ պայմաններ:

Ակցեպտ՝ Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով և անվերապահորեն Օֆերտայի, այդ թվում՝ Գնացուցակի, նաև Կատարողի կողմից ներկայացված հաշիվների ընդունումը՝ Օֆերտայով նախատեսված համապատասխան գործողությունների իրականացման

միջոցով: Ակցեպտավորումը իրականացվում է նաև Համակարգում գրանցվելիս «Ծանոթացել եմ և համաձայն եմ» դաշտի լրացման և հաստատման միջոցով:

Կատարող՝ «Հայկական ծրագրեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, իսկ Պայմանագրի առանձին մասերի էությունից ելնելով նաև Կատարողի համապատասխան աշխատակիցները կամ Կատարողի կոնտրագենտները /ծառայություններ մատուցողները և այլն/:

Պատվիրատու՝ իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ, որը որպես կանոն զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և Կատարողի հետ Օֆերտայի պայմանների ակցեպտավորմամբ (ընդունմամբ) կնքում է Պայմանագիրը և ընտրված Սակագնային փաթեթի և Կայքում հրապարակված Գնացուցակի հիման վրա ստանում Պայմանագրով նախատեսված ծառայությունները:

Կայք՝ Կատարողին պատկանող համացանցում տեղակայված կայքէջերի համալիր՝ https://www.armsoft.am հասցեում գտնվող մեկնարկային կայքէջով, որի միջոցով կարելի է մուտք գործել մյուս բոլոր կայքէջեր և որոնց կիրառմամբ, ինչպես նաև Կայքում առկա համապատասխան հավելվածների, ծրագրերի հղումների օգտագործմամբ Պատվիրատուին տրամադրվում են Պայմանագրով նախատեսված Ծառայությունները: Միայն Կայքի օգտագործմամբ հնարավոր չէ օգտվել Պատվիրատուի Ծառայություններից:

Ծրագրային արտադրանքներ՝ Կատարողին պատկանող բիզնեսի կառավարման և/կամ հաշվապահական հաշվառման համակարգերը և դրանց համապատասխան տվյալների շտեմարանը (պահոցները): Համակարգ մուտք գործելու հնարավորություն ապահովելուց հետո Պատվիրատուին հասանելի ծրագրային արտադրանքների (սպասարկման ծրագրերի) կոնկրետ ցանկը պայմանավորված է Պատվիրատուի կողմից ընտրված սակագնային փաթեթից: Համակարգի շահագործման համար անհրաժեշտ համապատասխան Ծրագրային արտադրանքների տեղադրումը և օգտագործումը իրականացվում է Կայքում առկա համապատասխան հղումներից կամ Կատարողի կողմից տրված էլեկտրոնային կրիչներից դրանք ներբեռնելու, իր Սարքավորումներում տեղադրելու և գործարկելու միջոցով:

Համակարգ՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար ծրագրերի փոխկապակցված ամբողջություն, որոնք նախատեսված են Օգտագործողի բիզնես գործընթացների ավտոմատացման և հաշվապահական հաշվառման կազմակերպման նպատակով և աշխատում են համացանցի միջոցով: Համակարգը իր մեջ ներառում է նաև Պայմանագրով սահմանված կարգով Ծրագրային արտադրանքների օգտագործման (ծրագրային սպասարկման) արդյունքում ձևավորված Օգտագործողի Ամպային տվյալների շտեմարանը (պահոցները):

Ծառայություններ՝ Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պայմաններով Պատվիրատուին Համակարգ մուտք գործելու հնարավորության (սպասարկման ծրագրերի հասանելիություն ապահովելու) և Պատվիրատուի կողմից ընտրված սպասարկման պայմաններին (սակագնային փաթեթին, բաժանորդագրության ժամկետին) համապատասխան տեղեկատվա-տեխնոլոգիական աջակցության ու Ամպային տվյալների պահոցների հասանելիության և դրանցում տեղեկատվության տեղակայման հնարավորության տրամադրման հետ կապված ծառայություններ, ինչպես նաև Պատվիրատուի կողմից պատվիրված Կատարողի կողմից տրամադրվող լրացուցիչ ծառայություններ:

Սակագնային փաթեթ՝ Պատվիրատուի սպասարկման ֆինանսական և այլ պայմանների համակցություն: Համապատասխան Սակագնային փաթեթի ընտրությունը պայմանավորված է Պատվիրատուի աշխատատեղերի քանակով: Ընտրված Սակագնային փաթեթի և Գնացուցակի հիման վրա որոշվում են Պատվիրատուին հասանելի աշխատատեղերի առավելագույն քանակը, փաթեթում ներառված հիմնական ծառայությունների ծավալը և արժեքները, ամպային տվյալների պահոցների թույլատրելի առավելագույն ծավալը: Սակագնային փաթեթները հիմնված են /նույնանում են/ հրապարակված Գնացուցակի վրա և գործելու են Գնացուցակով նախատեսված պայմանների շրջանակներում:

Գնացուցակ՝ Կատարողի կողմից միակողմանիորեն հաստատված, փոփոխված և լրացված փաստաթուղթ կամ մի քանի փաստաթղթեր, որոնցով սահմանվում են Կատարողի կողմից տրամադրվող Ծրագրային արտադրանքների, Համակարգից օգտվելու իրավունքի և Ծառայությունների արժեքները, տրամադրվող Ամպային տվյալների պահոցների նվազագույն և առավելագույն քանակը/չափը և դրանց արժեքները, ինչպես նաև դրանց կիրառման պայմանները: Գնացուցակը, դրա հետագա փոփոխությունները և նոր խմբագրությունները տեղադրվում և հրապարակվում են Կայքում և հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Կիրառման ենթակա է Պայմանագրի կնքման պահի դրությամբ գործող Գնացուցակը: Գնացուցակը (փոփոխությունները և նոր խմբագրությունները) հաստատվում է «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ի տնօրենի որոշմամբ:

Օգտագործող՝ Համակարգում գրանցված Պատվիրատուն և/կամ Պատվիրատուի աշխատակիցը, որի տվյալներով Համակարգում ստեղծվում է համապատասխան Հաշիվ և նույնականացում անցնելուց հետո Օգտագործողը, ըստ ձեռք բերած ծրագրային ապահովման և ընտրված սակագնային փաթեթի, իրականացնում է Համակարգի լիարժեք օգտագործումը և կառավարումը: Համակարգում գրանցում և նույնականացում անցնելուց հետո Պատվիրատուի և/կամ Օգտագործողի ներկայացրած տվյալների, մասնավորապես

էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի կամ այլ տվյալների հիման վրա վերջինիս տրամադրվում է համապատասխան մուտքանուն, որի և Պատվիրատուի և/կամ Օգտագործողի կողմից ստեղծված գաղտնաբառի կիրառմամբ իրականացվելու է մուտքը Համակարգ և Օգտագործողի հաշիվ: Օգտագործողների փաստացի քանակը և դրանով պայմանավորված էլ լիցենզիաների քանակը հաշվարկվում է Համակարգին կատարված միացումների քանակի հիման վրա (Windows session):

Օգտագործողի հաշիվ՝ Համակարգում Օգտագործողի վերաբերյալ եզակի տվյալների համակցություն, որի միջոցով Օգտագործողը Համակարգում անցնում է նույնականացում և ստանում Համակարգի մուտքի թույլտվություն: Հաշվի մուտք գործումը իրականացվում է Օգտագործողի մուտքանվան և գաղտնաբառի կիրառմամբ

Անձնական գրասենյակ՝ Համակարգում Օգտագործողի անհատական բաժինը, որը կապված է Հաշվի հետ և պարունակում է Համակարգի պատշաճ աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր հիմնական գործիքակազմը, ինչպես նաև Ամպային տվյալների պահոցի վերաբերյալ տեղեկատվություն:

Նույնականացում՝ Օգտագործողի կողմից Համակարգ մուտք գործելու թույլտվության տրամադրման իրավաչափության գնահատման ընթացակարգ, որը իրականացվում է էլեկտրոնային գրանցման միջոցով՝ կիրառելով համապատասխան մուտքանուն և գաղտնաբառ:

Անձնական տվյալներ՝ Համակարգի օգտագործման արդյունքում ֆիզիկական անձանց վերաբերյալ ստացված տեղեկատվություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել տվյալ անձի ինքնությունը.

Անձնական տվյալների մշակում՝ ավտոմատացված, տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:

Անձնական տեղեկատվություն՝ Համակարգի օգտագործման և կառավարման արդյունքում ձևավորված Պատվիրատուի և/կամ Օգտագործողի վերաբերյալ բիզնես կառավարման, հաշվապահական և հաշվարկային տվյալներ և Համակարգի կիրառման համար անհրաժեշտ և դրա էությունից բխող այլ տեղեկատվություն:

Ամպային տվյալների պահոցներ՝ Համակարգի բաղկացուցիչ մաս, որտեղ պահվում են Օգտագործողի՝ Համակարգի օգտագործման և կառավարման ընթացքում ձևավորված անձնական տեղեկատվությունը և որը, պայմանավորված Պատվիրատուի

ընտրած Սակագնային փաթեթով, ունի որոշակի առավելագույն ծավալ: Պայմանագրի հիման վրա Համակարգի կիրառմամբ Պատվիրատուին տրամադրվում են երկու տեսակի Ամպային պահոցներ՝ Տեղեկատվության պահոց և Պատճենների պահոց:

Պատճենների պահոց՝ օրական մեկ անգամ պարբերականությամբ Տեղեկատվության պահոցում առկա տվյալների (տեղեկատվության) պատճենահանման արդյունքում ձևավորված ամպային տվյալների ամբողջություն: Տվյալների (տեղեկատվության) պատճենահանումը կարող է որոշակի պարբերականությամբ իրականացվել նաև Պատվիրատուի կողմից Համակարգի ընձեռած հնարավորության սահմաններում:

Սարքավորումներ՝ Պատվիրատուին պատկանող սարքավորումները (համակարգիչ, հաշվիչ դրամարկղային մեքենաներ, տերմինալ, նոութբուք և այլ սարքեր), ներառյալ՝ ապարատային միջոցները և ծրագրային ապահովումները:

Բաժանորդագրության ժամկետ՝ Պատվիրատուի կողմից վճարված ժամանակահատված, որի ամբողջ ընթացքում Պատվիրատուին տրամադրվում է մուտք Համակարգ և դրան համապատասխան Համակարգում ներդրված ծառայությունները, այդ թվում՝ սպասարկման ծառայություններ:

Լոկալ տարբերակ՝ Պատվիրատուի կողմից օգտագործվող Կատարողին պատկանող բիզնեսի կառավարման և/կամ հաշվապահական հաշվառման համակարգերը, որոնց պաշտպանությունը իրականացվում է ապարատային (էլեկտրոնային USB) բանալիով:

Պայմանագրում կարող են կիրառվել արտահայտություններ, որոնց նշանակությունը սահմանված չէ Պայմանագրի 1-ին բաժնում: Այդ դեպքում նման արտահայտությունների մեկնաբանությունը իրականացվում է Պայմանագրի բովանդակությանը և էությանը համապատասխան:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

2.1. Սույն փաստաթուղթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է «Հայկական Ծրագրեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ Պայմանագրի կնքման վերաբերյալ հրապարակային Օֆերտա: Սույն հրապարակային Օֆերտայի բովանդակությունը տեղադրված և հրապարակված է Կատարողին պատկանող Կայքում հետևյալ հասցեով՝ https://www.armsoft.am/data/oferta.pdf:

2.2. Պայմանագրի կնքման պայմանների և կարգի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը, որոնք կարգավորում են հրապարակային պայմանագրի (ՀՀ ՔՕ 442-րդ հոդված), միանալու պայմանագրի (ՀՀ ՔՕ 444-րդ հոդված),

օֆերտայի և դրա ակցեպտի (ՀՀ ՔՕ 451-459 հոդվածներ) ներկայացման կարգը և պայմանները:

2.3. Սույն հրապարակային Օֆերտայի ակցեպտ (ընդունում) և Պայմանագրի կնքման պահ է համարվում սույն Պայմանագրի 5-րդ գլխով նախատեսված կարգով և չափով համապատասխան վճարումը /կանխավճարը/ Կատարողի կողմից ստանալու պահը:

Սույն կետին համապատասխան իրականացված ակցեպտ նշանակում է Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով և անվերապահորեն Օֆերտայի (Պայմանագրի), այդ թվում՝ Գնացուցակի, նաև Կատարողի կողմից ներկայացվող հաշիվների ընդունումը:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ Պատվիրատուի կողմից սույն հրապարակային Օֆերտայի ակցեպտի (ընդունման) միջոցով կնքված Պայմանագիրը համարվում է սույն հրապարակային Օֆերտայի պայմանների հիման վրա գրավոր ձևով կնքված պայմանագիր և հանդիսանում է պայմանագրի երկու կողմերի կողմից փաստաթղթային ձևով կնքված պայմանագրին համարժեք:

2.4. Համաձայնվելով սույն հրապարակային Օֆերտայի պայմաններին և իրականացնելով Պայմանագրի 2.3 կետին համապատասխան որպես ակցեպտ ճանաչվող գործողությունները, Պատվիրատուն հաստատում և երաշխավորում է, որ

- Պայմանագրի կնքումը և Գնացուցակին համապատասխան Սակագնային փաթեթի, Բաժանորդագրության ժամկետի, Ամպային տվյալների պահոցների ծավալների ընտրությունը հանդիսանում է իր ազատ կամքի դրսևորում, Համակարգում գրանցման, Պայմանագրի կնքման և իրականացման, վճարումների կատարման ժամանակ իր մասին տրամադրում է ճիշտ, արժանահավատ և արդիական տեղեկություններ (տվյալներ), ծանոթացել է և համաձայն է Օֆերտայի (Պայմանագրի) բոլոր պայմաններին, այդ թվում՝ Օֆերտայի անբաժանելի մասը կազմող Գնացուցակին և Օֆերտայում նշված այլ փաստաթղթերին, ինչպես նաև Համակարգի գործունեությանը վերաբերող Կայքում տեղադրված և հրապարակված բոլոր փաստաթղթերին և տեղեկատվությանը, Պայմանագրի կնքման համար ունի անհրաժեշտ գործունակություն և իրավունակություն և օժտված է բավարար լիազորություններով:

2.5. Պայմանագրի 2.3 կետին համապատասխան որպես ակցեպտ ճանաչվող գործողությունների իրականացումից հետո Պատվիրատուն իրավունք չունի ներկայացնել որևէ պատճառաբանություն Օֆերտայի պայմաններին ծանոթ չլինելու և/կամ Օֆերտայի պայմաններից որևէ մեկի և/կամ որևէ փաստաթղթի հետ համաձայն չլինելու վերաբերյալ և այդ հիմքերով իրավունք չունի վիճարկել Պայմանագրի կնքման փաստը և/կամ Պայմանագրի որևէ պայմանի կիրառելիությունը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

3.1. Պայմանագրով Կատարողը գույքային իրավունքների գործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում՝ նաև անժամկետ Պատվիրատուի օգտագործմանն է հանձնում Ծրագրային արտադրանքները այնքանով, որքանով դրանք հանդիսանում են համակարգչային ծրագիր և իրենց մեջ չեն ներառում տվյալներ /օրինակ՝ b2b.armsoft հարթակի/ կամ սպասարկման միջոցով Կատարողի կողմից մատուցվող այլ ծառայություններ, դրանց թարմացված տարբերակները և Պայմանագրով ու Գնացուցակով նախատեսված պայմաններով և ծավալով Պատվիրատուին է տրամադրում Համակարգի և Ամպային տվյալների պահոցների օգտագործման իրավունքը՝ իրականացնելով Համակարգի սպասարկում, տրամադրելով Համակարգի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվա-տեխնիկական աջակցություն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, Պայմանագրով և Գնացուցակով նախատեսված լրացուցիչ ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրանց համար Պայմանագրով և Գնացուցակով նախատեսված արժեքները:

3.2. Համակարգի օգտագործման իրավունքի տրամադրմամբ Պատվիրատուին է տրամադրվում վճարված Բաժանորդագրության ժամկետի ամբողջ ընթացքում Համակարգի և Համակարգի համապատասխան ծրագրային արտադրանքների /ծրագրային ապահովումների/ ֆունկցիոնալ հնարավորությունները օգտագործելու ոչ բացառիկ, սահմանափակ և չփոխանցվող իրավունքը ու Ամպային տվյալների պահոցներում տեղեկատվության հավաքագրման և պահպանության հետ կապված ծառայությունները՝ ընտրված Սակագնային փաթեթով (Գնացուցակով) նախատեսված պայմաններին և ծավալներին համապատասխան:

3.3. Պայմանագրի 2.2 կետում նշված իրավունքները և ծառայությունները վերաբերում են Համակարգում գրանցված և նույնականացում անցած Պատվիրատուի Օգտագործողներին՝ Օգտագործողների թույլատրելի քանակի սահմաններում: Պատվիրատուն իրավունք ունի սահմանափակել իր Օգտագործողների իրավունքները (օրինակ՝ սահմանափակել մուտքը Համակարգի առանձին ծրագրային ապահովումներ): Ընդ որում, Պատվիրատուն կրում է իր Օգտագործողների գործողությունների համար ամբողջ պատասխանատվությունը:

3.4. Սակագնային փաթեթների ցանկը և նկարագրությունը, որոնք Պատվիրատուն կարող է ընտրել, ներառյալ՝ դրանցով նախատեսված ծրագրային ապահովումների և Ամպային տվյալների պահոցների ծավալը, տեղեկատվա-տեխնիկական աջակցության ծավալները, Բաժանորդագրության ժամկետների հնարավոր տարբերակները, ինչպես նաև լրացուցիչ ծառայությունների և հնարավորությունների ցանկը և ամպային

ծառայություններին անցնելու պայմանները սահմանվում են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող տվյալ ժամանակաշրջանում գործող Գնացուցակով, որը հրապարակված է Կայքում համապատասխան հղման տակ:

3.5. Կատարողը հանդիսանում է Ամպային տվյալների պահոցների կառավարման ադմինիստրատոր և իրականացնում դրանց պատշաճ պահպանությունը և գաղտնիությունը:

3.6. Պայմանագրով և ընտրված Սակագնային փաթեթով նախատեսված սպասարկման ժամկետի ավարտից հետո, երբ Պատվիրատուն չի երկարաձգում Պայմանագրի ժամկետը, Ամպային տվյալների պատճենների պահոցում պահվող տեղեկատվությունը Պատվիրատուի պահանջով էլեկտրոնային կրիչով տրամադրվում է վերջինիս (կրիչի համար վճարելու պայմանով) կամ տեղեկատվության տրամադրումը իրականացվում է այլ տեխնիկական միջոցների կամ տեղեկատվության փոխանակման այլ էլեկտրոնային հնարավորությունների կիրառմամբ, որոնք թույլ են տալիս հաստատել տեղեկատվության տրամադրման հանգամանքը: Իսկ Պատվիրատուի կողմից նման պահանջի բացակայության դեպքում Ամպային տվյալների պատճենների պահոցում պահվող ամբողջ տեղեկատվությունը Կատարողի կողմից Ամպային տվյալների պահոցի տրամադրման ժամկետի ավարտից հետո 3 /երեք/ ամիս անց հեռացվում է Ամպային տվյալների պահոցից:

3.7. Ծրագրային արտադրանքները և Համակարգը մշակվել է Կատարողի կողմից, վերջինիս է պատկանում Համակարգի նկատմամբ բացառիկ իրավունքները:

3.8. Պայմանագրով նախատեսված Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվում են հեռավար կարգով՝ հեռահաղորդակցության (հեռախոսակապի, ինտերնետ կապի, էլեկտրոնային փոստի և այլնի) միջոցով:

3[1]. ԹԵՍՏ-ԴՐԱՅՎ

3.1[1]. Ծառայությունների մատուցումը կարող է իրականացվել փորձնական տարբերակով՝ մինչև 60 օր ժամկետով: Փորձնական ժամկետում Ծառայությունները որպես կանոն մատուցվում են ոչ ամբողջական տարբերակով. կատարողի միակողմանի ցանկությամբ փորձնական տարբերակի ընթացքում կարող են Ծառայության ֆունկցիոնալությունները ընդլայնվել կամ նեղացվել: Փորձնական տարբերակով Ծառայությունների մատուցումը կարող է զուգակցվել տարատեսակ գովազդներով՝ հաշվի առնելով, որ փորձնական տարբերակը կրում է մարքետինգային բնույթ Կատարողի համար: Փորձնական ժամկետը նախատեսված չէ Ծառայություններից ամբողջությամբ ստանդարտ օգտվելու համար. փորձնական տարբերակը նախատեսված է Ծառայություններն

ուսումնասիրելու համար, մասնավորապես, պարզելու՝ համապատասխանում է արդյոք այն Օգտագործողի/Պատվիրատուի պահանջներին և կարիքներին:

3.2[1]. Փորձնական ժամկետի ընթացքում՝ մինչև 60 օրը լրանալը, Կատարողն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնելու Ծառայությունների մատուցումը, եթե պարզում է, որ Օգտագործողի/Պատվիրատուի նպատակը ոչ թե Ծառայությունների փորձարկումը, ուսումնասիրությունն է, այլ փաստացի օգտագործումը և/կամ Օգտագործողը/Պատվիրատուն վճարում է Ծառայությունների ամբողջական մատուցման համար սույն օֆերտայով սահմանված պայմանագրի գինը: Փորձնական ժամկետը լրանալուց հետո Պայմանագրի լուծումն իրականացվում է ինքնաբերաբար:

3.3[1]. Փորձնական տարբերակի դեպքում Պայմանագրի գին կարող է չսահմանվել՝ հաշվի առնելով, որ Թեստ-դրայվը կրում է մարքետինգային բնույթ, դրա ընթացքում կարող են իրականացվել գովազդային արշավներ, Ծառայությունները մատուցվում են որոշակի սահմանափակումներով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. **Ի կատարումն Պայմանագրի պայմանների՝ Կատարողն իրավունք ունի.**

4.1.1. միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի պայմանները, Համակարգ մուտք գործելու պայմանները, հիմնական և լրացուցիչ ծառայությունների ցանկը, ծրագրային արտադրանքների անվանումները և կազմը, Համակարգի օգտագործման համար տրվող իրավունքների ծավալը, Գնացուցակը, Սակագնային փաթեթները և սպասարկման այլ պայմանները՝ այդ մասին ծանուցելով Պատվիրատուին և/կամ Օգտագործողին և համապատասխան փոփոխություններով Պայմանագիրը/Օֆերտան տեղադրելով Կայքում: Այդպիսի փոփոխությունները ուժի մեջ են մտնում Կայքում համապատասխան փաստաթղթերի կամ տեղեկատվության հրապարակման պահից, եթե այլ բան սահմանված չէ փոփոխությունների մասին ծանուցման հրապարակման մեջ կամ Պատվիրատուին ներկայացված ծանուցման մեջ: Պատվիրատուն պարտավոր է ինքնուրույն հետևել Կայքում հրապարակված բոլոր փոփոխություններին և տեղեկատվությանը (այդ թվում այլ կայքերին հղումների տեսքով): Պատվիրատուի կողմից Համակարգի (Համակարգի ցանկացած հավելվածի) օգտագործման շարունակումը (այդ թվում՝ Պատվիրատուի ցանկացած Օգտագործողի կողմից), կամ նոր սակագների հիման վրա Պատվիրատուի կողմից հաշիվների վճարումը կամ Պատվիրատուի կողմից Կայքում փոփոխությունների հրապարակումից և/կամ ներկայացված ծանուցումից հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում առարկությունների բացակայությունը նշանակում է Պատվիրատուի կողմից

Պայմանագրի, սակագների/Սակագնային փաթեթների և սպասարկման այլ պայմանների բոլոր փոփոխությունների ընդունում և դրանց վերաբերյալ համաձայնության տրամադրում:

4.1.2. անվերապահորեն սահմանափակել կամ արգելափակել Պատվիրատուի/Օգտագործողի մուտքը Համակարգ, եթե.

i. Պատվիրատուն/Օգտագործողը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում համապատասխան վճարումները, կամ Պայմանագրի պայմանների խախտումները և/կամ թերությունները վերացնելուն ուղղված Կատարողի պահանջները,

ii. Պատվիրատուն/Օգտագործողը Համակարգը, ծրագրային ապահովումները և Ամպային տվյալների պահոցները օգտագործում է /կիրառում է/ օրենքով արգելված կամ Պայմանագրով չնախատեսված, ինչպես նաև երրորդ անձանց իրավունքները խախտող նպատակներով,

iii. Պատվիրատուն/Օգտագործողը իր գործողություններով, համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, խափանում է Համակարգի բնականոն գործունեությունը կամ Ամպային տվյալների պահոցները ծանրաբեռնում է Համակարգի աշխատանքի էությունից և Պատվիրատուի գործունեությունից չբխող, ոչ պետքական տեղեկատվությամբ, որի արդյունքում առաջանում են տեխնիկական խնդիրներ:

4.1.3. Պատվիրատուի/Օգտագործողի կողմից ստացված անձնական տվյալները և այլ անձնական տեղեկատվությունը օգտագործել բացառապես Համակարգի աշխատանքի բարելավման, արդյունավետության բարձրացման, Համակարգի և Ամպային տվյալների պահոցների պաշտպանվածության մակարդակի բարձրացման, Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման, մարքեթինգային և գովազդային, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով: Անձնական տվյալների և այլ անձնական տեղեկատվության տրամադրումը երրորդ անձանց կարող է իրականացվել բացառապես վերը նշված նպատակների համար: Դրանց փոխանցումը երրորդ անձանց այլ առևտրային նպատակների կիրառման համար արգելվում է:

4.1.4. իրականացնել Պատվիրատուի կողմից Համակարգի օգտագործման պայմանների, առկա սահմանափակումների պահպանման նկատմամբ հսկողություն,

4.1.5. կատարել ցանկացած տեսակի փոփոխություններ, որոնք ուղղված են Համակարգի աշխատանքի բարելավմանը, արդյունավետության, պաշտպանվածության բարձրացմանը, Համակարգի միջոցով մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը,

4.1.6. ժամանակավոր սահմանափակել Համակարգի, ինչպես նաև Ամպային տվյալների պահոցների հասանելիությունը՝ կապված պլանային պրոֆիլակտիկ աշխատանքների, Համակարգի արդիականացման, խափանումների և դրանց հետևանքների վերացման և այլ հանգամանքների հետ, որոնք իրենց էությամբ կարող են խոչընդոտել Համակարգի բնականոն աշխատանքին,

4.1.7. անհրաժեշտության դեպքում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել երրորդ անձանց՝ պահպանելով անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանվածության պահանջները և կրելով նշված անձանց գործողությունների համար պատասխանատվություն,

4.1.8. Պատվիրատուի/Օգտագործողի կողմից անընդմեջ ավելի քան 6 /վեց/ ամիս Համակարգի չօգտագործման պարագայում Համակարգից հեռացնել Օգտագործողի Հաշիվը և Ամպային տվյալների պահոցներում պահպանվող Պատվիրատուին/Օգտագործողին պատկանող ամբողջ տեղեկատվությունը (տվյալները)՝ նշված ժամկետի ընթացքում Պատվիրատուի/Օգտագործողի կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու դեպքում տրամադրելով նշված տեղեկատվությունը պարունակող համապատասխան էլեկտրոնային կրիչ, որի արժեքը ենթակա է հատուցման Պատվիրատուի կողմից կամ տեղեկատվության տրամադրումը իրականացնել այլ տեխնիկական միջոցների կամ տեղեկատվության փոխանակման այլ էլեկտրոնային հնարավորությունների կիրառմամբ, որոնք թույլ են տալիս հաստատել տեղեկատվության տրամադրման հանգամանքը

4.1.9. իրականացնել Պայմանագրով նախատեսված և դրա էությունից բխող այլ իրավունքներ:

4.2. **Ի կատարումն Պայմանագրի պայմանների՝ Կատարողը պարտավոր է.**

4.2.1. պատշաճ կարգով մատուցել Պայմանագրով սահմանված ծառայությունները,

4.2.2. Պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովել Պատվիրատուի/Օգտագործողի մուտքը Համակարգ և ընձեռել Համակարգի՝ ընտրված Սակագնային փաթեթով նախատեսված ծավալին համապատասխան հնարավորություններից, գործիքներից և ծրագրային ապահովումներից օգտվելու հնարավորություն,

4.2.3. ապահովել Համակարգի, ինչպես նաև Ամպային տվյալների պահոցների շուրջօրյա, շաբաթը յոթ օր՝ ներառյալ հանգստյան և տոն օրերը, հասանելիությունը, գործունակությունը,

4.2.4. հնարավորությունների սահմաններում և ըստ անհրաժեշտության ձեռնարկել Համակարգի աշխատանքի որակի բարձրացմանն ուղղված միջոցներ,

4.2.5. ծրագրային ապահովման մեջ խափանումների և սխալների հայտնաբերման դեպքերում (բացառությամբ տեխնիկական և ծրագրային միջոցների անհամատեղելիության, տեխնիկական միջոցների խափանումների, ծրագրային վիրուսների, աշխատակիցների՝ ծրագրով չնախատեսված գործողությունների պատճառով առաջացած դեպքերի) վերացնել դրանք ապագա տարբերակներում,

4.2.6. ապահովել Անձնական տվյալների և Ամպային տվյալների պահոցներում առկա այլ տեղեկատվության գաղտնիությունը և Պայմանագրի իմաստից և էությունից բխող իր վերահսկողության ոլորտում դրանց պաշտպանվածությունը,

4.2.7. ընտրված Սակագնային փաթեթով նախատեսված պարբերականությամբ ապահովել Տեղեկատվության պահոցում առկա տվյալների և տեղեկատվության պատճենումը և դրա արդյունքում առաջացած տեղեկատվության պահպանումը Պատճենների պահոցում,

4.2.8. Պատվիրատուին/Օգտագործողին Համակարգի միջոցով կամ դրանում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել Պայմանագրի պայմանների, սակագների, Սակագնային փաթեթների և սպասարկման այլ պայմանների փոփոխության մասին,

4.2.9. Պատվիրատուին/Օգտագործողին Համակարգի միջոցով կամ դրանում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել նախօրոք պլանավորված Համակարգի հասանելիության և աշխատանքի սահմանափակումների մասին,

4.2.10. Պատվիրատուին/Օգտագործողին Համակարգի միջոցով կամ դրանում գրանցված էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտող հանգամանքների մասին,

4.2.11. իրականացնել Համակարգի շահագործման և Համակարգի օգտագործման հետ կապված Օգտագործողի գործունեության տեխնիկական աջակցություն, այդ թվում՝ նաև Համակարգի շահագործման և տրված հնարավորությունների հետ կապված հարցերով: Համակարգի սպասարկումը չի ներառում Պատվիրատուի և/կամ Օգտագործողի կողմից խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

- հաշվապահական և հարկային հաշվառման վարման մեթոդաբանություն,
- ուսուցման ընթացքում ստացված տեղեկատվություն,
- համակարգի շահագործման հետ չկապված՝ Windows օպերացիոն համակարգի օգտագործում,
- տեխնիկական միջոցների և համակարգչային ցանցի ոչ նորմալ աշխատանք:

4.2.12. Համակարգը տրամադրվում է այնպես ինչպես կա և դրա շահագործման ընթացքում Պատվիրատուն պարտավոր է ինքնուրույն հետևել ավտոմատացված պրոցեսների օրենսդրական պահանջներին համապատասխանելիությունը:

4.2.13. կրել Պայմանագրով, ինչպես նաև ընտրված Սակագնային փաթեթով, Գնացուցակով նախատեսված և դրանց էությունից բխող այլ պարտավորություններ:

4.3. **Ի կատարումն Պայմանագրի պայմանների՝ Պատվիրատուն /Օգտագործողը/ իրավունք ունի.**

4.3.1. Պատվիրատուի համաձայնությամբ պատվիրել և ստանալ Պայմանագրով նախատեսված լրացուցիչ ծառայություններ՝ դրանց համար վճարելու պայմանով,

4.3.2. մեկ Սակագնային փաթեթից տեղափոխվել մեկ այլ Սակագնային փաթեթի (իրականացնել Սակագնային փաթեթի արդիականացում, Ամպային տվյալների պահոցների ծավալների ավելացում)՝ վճարելով փաթեթների արժեքների տարբերությունը կամ ավելացված ծավալների համար՝ ըստ տվյալ պահին գործող Գնացուցակի,

4.3.3. Հաշվի տվյալներում կատարել փոփոխություններ,

4.3.4. Համակարգը և Համակարգի ծրագրային արտադրանքները, ինչպես նաև Ամպային տվյալների պահոցները օգտագործել Պայմանագրով նախատեսված սահմաններում և ընտրված Սակագնային փաթեթի պայմաններով՝ պարտադիր կարգով պահպանելով իրավատերերի կողմից և լիցենզիոն համաձայնագրերով սահմանված օգտագործման և սահմանափակումների պայմանները,

4.3.5. իր կողմից ընտրված Սակագնային փաթեթով տրամադրված Ամպային տվյալների պահոցների և ծրագրային ապահովումների ծավալների սպառման դեպքում համապատասխան վճարման դիմաց ավելացնել նշված ծավալները,

4.3.6. իր կողմից ընտրված Սակագնային փաթեթով տրամադրված Ամպային տվյալների պահոցների ծավալների սպառման դեպքում սեփական հայեցողությամբ պահոցներից հեռացնել (ջնջել) իրեն անհրաժեշտ քանակի տեղեկատվություն՝ կրելով դրանից բխող ամբողջ պատասխանատվությունը և բացասական ռիսկերը,

4.3.7. իր կողմից ընտրված Սակագնային փաթեթով տրամադրված Ամպային տվյալների պահոցների ծավալի սպառման պարագայում շարունակել դրանց օգտագործումը և տեղեկատվության մուտքագրումը՝ պարտավորվելով վճարել ավել օգտագործված ծավալների համար: Այս դեպքում Պատվիրատուն/Օգտագործողը կարող է գերազանցել իր Սակագնային փաթեթով տրամադրված Ամպային տվյալների պահոցի ծավալը մինչև 10 /տասը/ Գբ չափով: Նշված ծավալի սպառումից հետո Ամպային տվյալների պահոցի օգտագործումը արգելափակվում է և վերականգնվում միայն ավել օգտագործված

ծավալի համար վճարման և համապատասխան վճարման դիմաց ծավալների ավելացման դեպքում,

4.3.8. Պայմանագրի գործողության դադարեցման դեպքում համապատասխան պահանջ ներկայացնելիս ստանալ Ամպային տվյալների պահոցում պահվող իրեն պատկանող ամբողջական տեղեկատվությունը կրող էլեկտրոնային կրիչի օրինակ,

4.3.9. ստանալ խորհրդատվություն Համակարգի հնարավորությունների և աշխատանքի հետ կապված,

4.3.10. ստանալ տեղեկատվություն և ծանուցումներ Համակարգի գործունեության հետ կապված,

4.3.11. իրականացնել Պայմանագրով նախատեսված և Պայմանագրի էությունից բխող այլ իրավունքներ:

4.4. **Ի կատարումն Պայմանագրի պայմանների՝ Պատվիրատուն /Օգտագործողը/ պարտավոր է.**

4.4.1. պատշաճ կարգով և ժամանակին վճարել ընտրված Սակագնային փաթեթով սահմանված Պայմանագրի արժեքը,

4.4.2. խստորեն պահպանել և չխախտել Պայմանագրի պայմանները, ինչպես նաև ապահովել Կատարողի հետ Պայմանագրի շրջանակներում համագործակցության արդյունքում ստացած տեղեկատվության և անձնական տվյալների գաղտնիությունը և պաշտպանվածությունը՝ պայմանագրի պայմաններին համապատասխան,

4.4.3. Համակարգը չօգտագործել օրենքով արգելված և Պայմանագրի էությունից չբխող նպատակներով, որոնք խախտում են Կատարողի և երրորդ անձանց իրավունքները,

4.4.4. Պահպանել Գնացուցակով /ընտրված Սակագնային փաթեթով/ տրամադրված ծրագրային ապահովման և Ամպային տվյալների պահոցների ծավալները, իսկ գերազանցելու դեպքում վճարել ավել օգտագործված ծավալների համար սահմանված արժեքները,

4.4.5. Պայմանագրով նախատեսված իր իրավունքները և պարտավորությունները չփոխանցել երրորդ անձանց, երրորդ անձանց չտրամադրել Համակարգ մուտք գործելու հնարավորություն՝ բացառությամբ ընդհանուր իրավահաջորդության դեպքի:

4.4.6. ինքնուրույն ապահովել Համակարգ մուտք գործելու և Պայմանագրով սահմանված ծառայություններից օգտվելու համար նախատեսված իր տեխնիկական միջոցների և սարքավորումների սարքինությունը և գործունակությունը, ինչպես նաև ինտերնետ կապի հասանելիությունը,

4.4.7. չխոչընդոտել Պայմանագրի պայմանների, Համակարգի օգտագործման պայմանների և նախատեսված սահմանափակումների պահպանման նկատմամբ Կատարողի կողմից հսկողության իրականացմանը,

4.4.8. իր վավերապայմանների, գտնվելու վայրի հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի, ինչպես նաև Պայմանագրի կատարման համար նշանակություն ունեցող այլ տվյալների փոփոխության դեպքում այդպիսի փոփոխության պահից 7 /յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում փոփոխությունների մասին գրավոր կարգով կամ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել Կատարողին՝ տրամադրելով այդպիսի փոփոխությունները հաստատող փաստաթղթերը

4.4.9. Կատարողի համար ապահովել իր Սարքավորումներին և օգտագործողների ծրագրային ապահովումներին հեռահար մուտք գործելու հնարավորություն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունները հեռահար տրամադրելու նպատակով,

4.4.10. չխախտել Համակարգի և ծրագրային արտադրանքների կիրառման՝ իրավատերերի և Պայմանագրով սահմանված պայմանները,

4.4.11. չիրականացնել որևէ գործողություն, որը կարող է խախտել իրավատերերի իրավունքները, չօգտագործել Համակարգը կամ Համակարգի ծրագրային արտադրանքները Պայմանագրով սահմանված իրավասությունների գերազանցմամբ կամ նախատեսված սահմանափակումների անցմամբ,

4.4.12. ծառայությունների ստացման համար օգտագործել միայն սարքին և սերտիֆիկացված /եթե այն ենթակա է սերտիֆիկացման/ Սարքավորումներ, ինքնուրույն և իր հաշվին ապահովել Սարքավորումների միացումը ինտերնետ կապին, էլեկտրականությանը և կրել դրանց հետ կապված բոլոր ծախսերը,

4.4.13. Համակարգի օգտագործման համար կիրառել միայն լիցենզավորված ծրագրեր, ինքնուրույնաբար կնքել իրավատերերի հետ բոլոր անհրաժեշտ օգտագործման և այլ բնույթի պայմանագրերը,

4.4.14. ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների համապատասխանությունը Կատարողի կողմից կատարված Համակարգի թարմացումներին,

4.4.15. ապահովել իր Հաշվի տվյալների և մուտքանվան և գաղտնաբառի գաղտնիությունը և պաշտպանվածությունը, որևէ կերպ դրանք չփոխանցել կամ չհայտնել երրորդ անձանց,

4.4.16. Կատարողին անհապաղ հայտնել իր Հաշվի տվյալների կորստի, առևանգման դեպքերի մասին,

4.4.17. ժամանակին Կատարողին տրամադրել ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը,

4.4.18. կրել Պայմանագրով նախատեսված և Պայմանագրի էությունից բխող այլ պարտավորություններ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի արժեքը որոշվում է գործող Գնացուցակի հիման վրա՝ հաշվի առնելով Պատվիրատուի կողմից ընտրված Սակագնային փաթեթը, Բաժանորդագրության ժամկետը և սպասարկման հետ կապված այլ պայմանները, և սահմանվում է ծառայությունների վճարման հաշվով: Պայմանագրի արժեքը ներառում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը և պարտադիր վճարները:

5.2. Պայմանագրի արժեքի վճարումը կատարվում է կանխավճարային եղանակով՝ նախապես վճարելով տարվա համար սահմանված արժեքը:

5.3. Տարվա ընթացքում լրացուցիչ Ծառայություններից օգտվելու կամ Ամպային տվյալների պահոցների ծավալների ավելացման դեպքերում Կատարողը տվյալ պահին գործող Գնացուցակին համապատասխան տրամադրված յուրաքանչյուր լրացուցիչ ծառայության և ավելացված յուրաքանչյուր ծավալի համար ներկայացնում է լրացուցիչ հաշիվ:

5.4. Գնացուցակը /այդ թվում Սակագնային փաթեթներ/ հրապարակված է և պարբերաբար թարմացվում է Կատարողի Կայքում:

5.5. Գնացուցակով սահմանված Համակարգի շահագործման յուրաքանչյուր սակագնային փաթեթի արժեքը ներառում է նաև Համակարգի շահագործումն ապահովող Ծրագրային արտադրանքի տրամադրման արժեքը, Համակարգի սպասարկման մեկ տարվա արժեքը և Համակարգի վերաբերյալ Կատարողի կողմից կազմակերպվող դասընթացներին մասնակցության կտրոնների արժեքը:

5.6. Յուրաքանչյուր Սակագնային փաթեթով, ներառյալ հետագայում վճարման դիմաց Ամպային տվյալների պահոցների ծավալների ավելացումները, Պատվիրատուին տրամադրվող Ամպային տվյալների պահոցների առավելագույն ընդհանուր քանակը, Տեղեկատվության պահոցների թույլատրելի առավելագույն ծավալը, Պատճենների պահոցների թույլատրելի առավելագույն ծավալը սահմանվում է Գնացուցակով: Վճարման դիմաց Ամպային տվյալների պահոցների ծավալների ավելացումները հնարավոր է կատարել նշված Գնացուցակով սահմանված ծավալների շրջանակներում:

6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Պատվիրատուն, Համակարգում գրանցվելով և նույնականացում անցնելով, անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը Համակարգի օգտագործման և կառավարման ընթացքում Կատարողի կողմից ստացված այնպիսի տեղեկատվության մշակման, փոխանցման և պահպանման վերաբերյալ, որը պարունակում է անձնական տվյալներ (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվ և վայր, հաշվառման և/կամ փաստացի բնակության հասցեները, սեռը, քաղաքացիությունը, ՀՎՀՀ, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ) և համաձայն է, որ նշված տվյալները պետք է պահպանվեն Կատարողի մոտ և պետք է մշակվեն բացառապես Պայմանագրի նպատակների իրականացման համար՝ համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների:

6.2. Եթե Պայմանագրի կիրառման արդյունքում Կատարողը Պատվիրատուից ստանում է Անձնական տեղեկատվություն, ապա Կատարողը պարտավոր է Անձնական տվյալները մշակել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձնական տվյալների մշակման սկզբունքների և կանոնների պահանջներին խիստ համապատասխան: Պատվիրատուն և/կամ Օգտագործողը Անձնական տվյալները Կատարողին է տրամադրում Պայմանագրով սահմանված Համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման, Պայմանագրով նախատեսված ծառայությունների ստացման, Պայմանագրի առարկային վերաբերող ծանուցումներ ուղարկելու, ներկայացված հարցումների պատասխաններ, Համակարգի օգտագործման արդյունքում տարատեսակ տեղեկատվության և գովազդների ստացման նպատակով և Կատարողին է հանձնարարում դրանց մշակումը, որն իրականացվում է ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց կիրառման, ներառյալ անձնական տվյալների հավաքումը, ամրագրումը, մուտքագրումը, համակարգումը, կազմակերպումը, պահպանումը, օգտագործումը, վերափոխումը, վերականգնումը, փոխանցումը, ուղղումը, ուղեփակումը, ոչնչացումը:

6.3. Կատարողը Պատվիրատուի անունից հանդես գալով որպես անձնական տվյալների մշակող, պարտավոր չէ ստանալ Պատվիրատուի աշխատակիցների համաձայնությունը նրանց անձնական տվյալների մշակման անհրաժեշտության դեպքում: Անվերապահորեն ընդունելով Պայմանագրի պայմանները՝ Պատվիրատուն սույնով հաստատում է, որ նա նախապես ստացել է իր աշխատակիցների համաձայնություն վերջիններիս անձնական տվյալները Պայմանագրի կատարման շրջանակներում Կատարողին փոխանցելու համար:

6.4. Պատվիրատուի աշխատակիցների հանդեպ, ում անձնական տվյալները Պատվիրատուի անունից մշակվում են Կատարողի կողմից, պատասխանատվությունը կրում է հենց Պատվիրատուն:

6.5. Պատվիրատուի և/կամ Օգտագործողի կողմից Համակարգի օգտագործման և կառավարման ընթացքում երրորդ անձանց վերաբերյալ անձնական տվյալների ներկայացման պարագայում, Պատվիրատուն երաշխավորում է նշված անձանց համաձայնությունը Կատարողի կողմից իրենց անձնական տվյալների՝ Պայմանագրի պայմաններին համապատասխան հավաքագրման և մշակման վերաբերյալ և նշված երրորդ անձանց առջև վերջիններիս անձնական տվյալների պահպանության և մշակման համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն:

6.6. Պայմանագրով նախատեսված անձնական տվյալների մշակման համաձայնությունը գործում է Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում և Պայմանագրի գործողության դադարեցման պահից երեք տարվա ընթացքում կամ մինչև Պատվիրատուի կողմից գրավոր կարգով ներկայացված հրաժարումը:

6.7. Կատարողը սույնով երաշխավորում է, որ Համակարգի գործողության ընթացքում ստացված անձնական տվյալները իր կողմից կարող են օգտագործվել բացառապես Պայմանագրի կնքման, Պայմանագրի փոփոխության կամ լուծման, Պայմանագրով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցման, Պայմանագրով նախատեսված պարտավորությունների և գործողությունների պատշաճ կատարման ապահովման, Պայմանագրի կատարումից բխող Պատվիրատուին ծանուցումների, տեղեկատվության ներկայացման, ինչպես նաև Համակարգի զարգացման, արդյունավետության բարձրացման և նոր ծրագրային արտադրանքների ներդրման նպատակներով:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Պայմանագրի կնքման և կատարման ժամանակ Կողմերին հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության ու Պայմանագրի իմաստով առևտրային կամ այլ գաղտնիք համարվող ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ նաև Ամպային տվյալների պահոցներում պահվող անձնական տվյալները և այլ տեղեկատվությունը հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն:

7.2. Կողմերը պարտավոր են չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց հայտնի չդարձնել Պայմանագրի կնքման և կատարման ժամանակ իրենց հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության ու Պայմանագրի իմաստով առևտրային կամ այլ գաղտնիք համարվող տեղեկատվությունը:

7.3. Գաղտնիության վերաբերյալ Պայմանագրի սույն գլխի պահանջները խախտվելու դեպքում Պայմանագրի կողմն իրավունք ունի մյուս կողմից պահանջել հատուցելու դրա հետևանքով իրեն պատճառված վնասները:

7.4. Պայմանագրի սույն գլխի դրույթները գործում են նաև Պայմանագիրը ցանկացած հիմքով լուծվելու և/կամ դրա գործողությունը դադարեցվելուց հետո՝ լուծման կամ գործողության դադարման պահից սկսած 3 (երեք) տարվա ընթացքում:

7.5. Կողմի կողմից գաղտնի տեղեկատվության բացահայտումը կարող է իրականացվել միայն մյուս Կողմի գրավոր համաձայնության դեպքում կամ դատական պաշտպանության իրականացման ընթացքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավասու պետական մարմինների կողմից ներկայացված պահանջների հիման վրա:

7.6. Կատարողը երաշխավորում է Ամպային տվյալների պահոցներում՝ Տեղեկատվության պահոցում և Պատճենների պահոցում առկա Պատվիրատուին և/կամ Օգտագործողին պատկանող տեղեկատվության գաղտնիության պատշաճ պահպանումը: Ամպային տվյալների պահոցներում առկա տեղեկատվությունը հասանելի է միայն Պատվիրատուին և/կամ Օգտագործողին և Պատվիրատուի կողմից այդ տվյալներին հասանելիություն ապահովող իրավունքներ տրված այլ օգտվողներին, ինչպես նաև Կատարողի որոշ աշխատակիցներին՝ բացառապես սույն պայմանագրով նախատեսված նպատակներով Պատվիրատուն համաձայնվում է կրել պատասխանատվություն Համակարգ մուտք գործելու համար իր կողմից օգտագործվող Հաշվի գաղտնաբառերի գաղտնիության պահպանության համար: Դրանից ելնելով Կատարողի առջև Պատվիրատուն պատասխանատվություն է կրում իր Հաշվի օգտագործմամբ իրականացված բոլոր գործողությունների համար:

7.7. Պատվիրատուն պարտավորվում է անհապաղ Կատարողին ծանուցել իր Հաշվի և գաղտնաբառի ցանկացած անօրինական օգտագործման հայտնի դեպքի մասին:

7.8. Պատվիրատուն պարտավոր է իրականացնել Կատարողին փոխանցվող անձնական տվյալների մշակման և փոխանցման վերաբերյալ օրենսդրությամբ և այլ նորմատիվ-իրավական ակտերով նախատեսված բոլոր պահանջները: Պատվիրատուից Կատարողի ստացած բոլոր անձնական տվյալները համարվում են օրինական կարգով ստացված: Պատվիրատուն ընդունում է, որ իր կողմից անձնական տվյալների մշակման կարգի խախտումը Կատարողի համար որևէ պատասխանատվություն չի առաջացնում և Պատվիրատուին զրկում է անձնական տվյալների պաշտպանության կանոնների խախտման համար Կատարողի դեմ որևէ պահանջ ներկայացնելու հնարավորությունից, բացառությամբ Կատարողի կողմից դիտավորյալ խախտում կատարելուց միայն Պատվիրատուի կողմից օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջների պահպանման պայմանով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում Համակարգի օգտագործման և կառավարման ընթացքում առաջացած ուղղակի կամ անուղղակի վնասների, ներառյալ՝ բաց թողնված օգուտի, Կատարողից որևէ կերպ չկախված պատճառներով Համակարգի օգտագործման անհնարինության, Պատվիրատուի կողմից ներկայացված անձնական տվյալների և այլ տեղեկատվության արժանահավատության, ամբողջականության, ճշգրտության և արդիականության ապահովման համար: Պատվիրատուի կողմից ստացված անձնական տվյալները Պատվիրատուի կողմից մշակվում և պահվում են այն տեսքով և ձևով, որով դրանց ստացվել են:

8.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում Համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ և երրորդ անձանց կողմից տրամադրված կամ ապահովված ծրագրերի, ծառայությունների որակի համար:

8.4. Պատվիրատուն ընդունում է, որ Համակարգի շահագործման համար անհրաժեշտ է կիրառել նաև երրորդ անձանց կողմից արտադրված և տրամադրված ծրագրային ապահովումներ (օպերացիոն համակարգեր և այլն) և սարքավարումներ (համակարգիչներ, բջջային հեռախոսներ, կապի սարքավորումներ և այլն), որոնց աշխատանքի որակի համար Պատվիրատուն որևէ պատասխանատվություն չի կրում:

8.5. Կատարողը պատասխանատվություն չի կրում Համակարգի աշխատանքի այնպիսի խափանումների և ընդհատումների համար, որոնք անմիջականորեն կամ անուղղակիորեն առաջանում են Կատարողի ողջամիտ վերահսկողության ոլորտից դուրս գտնվող պատճառներով:

8.6. Պատվիրատուի առջև Կատարողի պատասխանատվությունը ցանկացած դեպքում սահմանափակված (այնքանով որքանով ցանկացած սահմանափակում չի հակասի ՀՀ օրենսդրությանը) է իրական վնասով, բայց ոչ ավելի, քան Պատվիրատուի կողմից Համակարգի օգտագործման ընտրված Սակագնային փաթեթի արժեքի 20 (քսան) տոկոսի չափով:

8.7. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի և/կամ Օգտագործողի կողմից կազմակերպչական և այլ միջոցառումների չկատարման համար, որը հանգեցրել է անձնական տվյալների մշակման համար չլիազորված անձանց կողմից անձնական տվյալներին պատահական կամ անօրինական հասանելիության, ինչպես նաև անձնական տվյալների ոչնչացման, փոփոխման, պատճենահանման, տարածման և կամ

արգելափակման, ինչպես նաև Պատվիրատուի աշխատակիցների և/կամ երրորդ անձանց կողմից ոչ իրավաչափ գործողությունների:

8.8. Կատարողը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործողությունների համար, որոնց ուղղված են Համակարգի տեղեկատվական անվտանգության կամ բնականոն գործունեության խախտմանը, ներառյալ՝ Համակարգի վրա DDOS հարձակումները, ինչպես նաև Համակարգի աշխատանքի այլ խափանումները, որոնց առաջացումը պայմանավորված է համակարգչային վիրուսներով կամ Համակարգի ծրագրային ապահովման մեջ այլ կողմնակի ներգործություններով:

8.9. Կատարողը չի երաշխավորում Համակարգի, այդ թվում՝ Ամպային տվյալների պահոցների բացարձակ անխափան կամ առանց սխալների աշխատանքը և դրա համար որևէ պատասխանատվություն չի կարող կրել:

8.10. Կատարողը չի տրամադրում ակնհայտ և ենթադրյալ երաշխիքներ, որ Համակարգը կամ Համակարգի առանձին ծրագրային արտադրանքները, Ամպային տվյալների պահոցները կհամապատասխանեն Պատվիրատուի բոլոր պահանջներին և սպասելիքներին կամ բոլոր խնդիրներին և նպատակներին: Պայմանագրով սահմանված ծառայությունները տրամադրվում են համաշխարհային պրակտիկայում ընդհանուր առմամբ ընդունված «AS IS» (այնպես, ինչպես որ կա) սկզբունքին համապատասխան: Կատարողը պատասխանատվություն չի կրում Համակարգի՝ Պատվիրատուի բիզնես գործընթացներին ճշգրիտ համապատասխանության համար:

8.11. Համակարգի օգտագործման և կառավարման ընթացքում հայտնաբերված սխալները և թերությունները առավելագույն կարճ ժամկետում վերացնելու և ուղղելու նպատակով Կատարողը նախաձեռնում է համապատասխան միջոցներ: Կատարողը չի երաշխավորում, որ բոլոր թերությունները կվերացվեն և չի տրամադրում որևէ հավաստիացումներ և երաշխիքներ Համակարգի որևէ սխալների և թերությունների վերացման ժամկետների հետ կապված:

8.12. Կատարողը պատասխանատվություն չի կրում և չի հատուցում Պատվիրատուի վնասները, որոնք պայմանավորված են Համակարգի շահագործման արդյունքում ծագած այնպիսի խախտումների և/կամ սխալների, որոնք առաջացել են Պատվիրատուի և/կամ Օգտագործողի աշխատակիցների կամ երրորդ անձանց ոչ իրավաչափ և/կամ դիտավորյալ գործողությունների, ինչպես նաև տեխնիկական միջոցների անսարքությունների և էլեկտրասարքավորումների խափանումների հետևանքով:

8.13. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում ինտերնետի որակի համար, որի միջոցով իրականացվում է Համակարգի մուտք գործումը և շահագործումը:

8.14. Պատվիրատուի և/կամ Օգտագործողի գործողությունների հետևանքով Ամպային տվյալների պահոցում առկա տեղեկատվության կորստի, ոչնչացման, փոխանցման, երրորդ անձանց հասանելիության համար Կատարողը պատասխանատվություն չի կրում, իսկ տվյալների վերականգնումը հնարավոր է իրականացնել միայն տեխնիկական հնարավորությունների առկայության պայմաններում:

8.15. Պատվիրատուն ինքնուրույն պատասխանատվություն է կրում Համակարգում իր գրանցման տվյալների՝ մուտքանվան և գաղտնաբառի պահպանման և գաղտնիության ապահովման համար: Մուտքանվան և գաղտնաբառի օգտագործմամբ իրականացված բոլոր գործողությունները համարվում են Պատվիրատուի կողմից իրականացված: Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կրած ցանկացած տեսակի վնասի համար, որը Պատվիրատուի կողմից կրվել է Համակարգ մուտք գործելու իր անձնական տվյալների կորստի կամ հրապարակման արդյունքում:

8.16. Կատարողը պատասխանատվություն է կրում Ամպային տվյալների պահոցների՝ Պայմանագրի պայմաններին համապատասխան պահպանության ապահովման համար:

8.17. Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրության պահանջների և/կամ Պայմանագրի պայմանների խախտման դեպքում Կատարողը առանց նախապես ծանուցելու և պատճառաբանության իրավասու է արգելափակել կամ հեռացնել Օգտագործողի Հաշիվը Համակարգից, իսկ Ամպային տվյալների պահոցում առկա տեղեկատվությունը ենթակա է պահպանման արգելափակման կամ հեռացման պահից սկսած 6 /վեց/ ամիս:

8.18. Անձնական տվյալների և այլ տեղեկատվության օգտագործումը Պայմանագրով չնախատեսված նպատակներով կամ Պատվիրատուի կողմից տրված իրավասություններից դուրս առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն Ամպային տվյալների պահոցներում առկա տեղեկատվության և Համակարգի աշխատանքի համար ներկայացված այլ անձնական տվյալների բովանդակության, դրանց հավաստիության և տարածման իրավաչափության համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն:

8.19. Պատվիրատուն ինքնուրույն պատասխանատվություն է կրում երրորդ անձանց առջև իր գործողությունների համար, որոնք կապված են Համակարգի շահագործման հետ, այդ թվում՝ եթե այդ գործողությունները հանգեցնում են երրորդ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման:

8.20. Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետը 5 /հինգ/ աշխատանքային օրից ավել խախտելու դեպքում Կատարողը իրավունք ունի կասեցնել Պատվիրատուի և/կամ Օգտագործողի մուտքը դեպի Համակարգ:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունների ամբողջական կատարումը՝ Պատվիրատուի կողմից ընտրված Սակագնային փաթեթին և բաժանորդագրության ժամկետին համապատասխան:

9.2. Համակարգի մուտքի հնարավորության տրամադրումը և Համակարգի ամբողջական շահագործումը /օգտագործումը/ հնարավոր է դառնում Պատվիրատուի կողմից ընտրված համապատասխան Սակագնային փաթեթի և Բաժանորդագրության ժամկետի համար Պայմանագրով նախատեսված վճարումների կատարումից հետո:

9.3. Պատվիրատուի կողմից նոր Բաժանորդագրության ժամկետի համար վճարելու դեպքում Պայմանագրի գործողությունը ինքնաշխատ կերպով երկարաձգվում է նշված ժամկետով:

9.4. Պայմանագրի համար, որը կնքվում է Պայմանագրով սահմանված կարգով Օֆերտայի ակցեպտավորման միջոցով, չի պահանջվում երկկողմանի ստորագրություն և ըստ այդմ Պայմանագիրը իրավաբանական ուժ ունի նաև էլեկտրոնային տարբերակով:

9.5. Եթե Պայմանագրի գործողության ժամկետի լրանալուց առնվազն 30 /երեսուն/ օր առաջ Կողմերից ոչ մեկը չի ծանուցում Պայմանագրից հրաժարման մասին, ապա Պայմանագիրը ինքնաշխատ կերպով համարվում է երկարաձգված նույն պայմաններով նախկինում գործող Սակագնային փաթեթի և Բաժանորդագրության ժամկետով՝ տվյալ պահին գործող Գնացուցակով սահմանված համապատասխան կանխավճարի վճարման հիման վրա:

9.6. Պայմանագրով նախատեսված Կողմերի այն պարտավորությունները, որոնք իրենց էությամբ պետք է շարունակեն գործել, ներառյալ՝ վճարումների, գաղտնիության, Ամպային տվյալների պահոցներում առկա տեղեկատվության պահպանության, փոխադարձ հաշվարկների հետ կապված պարտավորությունները, ուժի մեջ են մնում Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո մինչև դրանց ամբողջական կատարումը:

9.7. Կատարողը իրավասու է միակողմանիորեն փոփոխել և լրացնել Պայմանագրի պայմանները՝ այդ մասին համապատասխան տեղեկատվությունը հրապարակային եղանակով տեղադրելով Կայքում և Պատվիրատուին ծանուցելով Համակարգի և/կամ դրանում առկա էլեկտրոնային փոստի միջոցով: Ընդունելով Կատարողի կողմից կատարված համապատասխան փոփոխությունները կամ լրացումները՝ Պատվիրատուն

տալիս է իր համաձայնությունը Պայմանագրով նախատեսված ծառայությունների ստացումը փոփոխված կամ լրացված պայմանների հիման վրա իրականացնելու վերաբերյալ:

9.7.1. Կողմերն արձանագրում են, որ յուրաքանչյուր դեպքում, երբ Պատվիրատուն Պայմանագրի գործողության ընթացքում ավելացնում և/կամ պակասեցնում է Աշխատատեղերի քանակը, ցանկացած պարագայում Կատարողի կողմից պահպանվում (հիշվում է) Պատվիրատուի կողմից Պայմանագրի կնքման պահին ձեռք բերված Աշխատատեղերի առավելագույն քանակը: Կողմերն արձանագրում են, որ այն դեպքում, երբ.

i. Պատվիրատուն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկություն է հայտնում ավելացնել Աշխատատեղերի քանակը, ապա նման դեպքերում Պայմանագրի վերջնաժամկետը մնում է անփոփոխ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է հավելյալ վճարել Կատարողին ծրագրերի գների տարբերությունը:

ii. Պատվիրատուն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկություն է հայտնում նախկինում պակասեցրած Աշխատատեղերի քանակը կրկին ավելացնել և երբ վերջիններիս ընդհանուր քանակը պակաս է լինում նախկինում ձեռք բերված Աշխատատեղերի առավելագույն քանակից, ապա Պայմանագրի վերջնաժամկետը մնում է անփոփոխ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին միայն Աշխատատեղերի քանակի նման փոփոխության արդյունքում ավելացած Համակարգերի սպասարկման արժեքի տարբերությունը:

iii. Պատվիրատուն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկություն է հայտնում նախկինում պակասեցրած Աշխատատեղերի քանակը կրկին ավելացնել՝ վերականգնել նախկինում ձեռք բերված առավելագույն քանակը, ապա Պայմանագրի վերջնաժամկետը մնում է անփոփոխ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին միայն Աշխատատեղերի քանակի նման փոփոխության արդյունքում ավելացած Համակարգերի սպասարկման արժեքի տարբերությունը:

iv. Պատվիրատուն Պայմանագրի գործողության ընթացքում ցանկություն է հայտնում նախկինում պակասեցրած Աշխատատեղերի քանակը կրկին ավելացնել և երբ վերջիններիս ընդհանուր քանակը գերազանցում է նախկինում ձեռք բերված Աշխատատեղերի առավելագույն քանակը, ապա Պայմանագրի վերջնաժամկետը մնում է անփոփոխ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Պայմանագրի կնքման պահին ձեռք բերված Աշխատատեղերի առավելագույն քանակի և տվյալ փոփոխության արդյունքում ձեռք բերվող Աշխատատեղերի քանակի միջև գնային տարբերությունը (վճարը գանձվում է միայն Պայմանագրի կնքման պահին ձեռք բերված

Աշխատատեղերի առավելագույն քանակը գերազանցող քանակի համար), ինչպես նաև Պայմանագրի կնքման պահին գործող և տվյալ փոփոխությունների արդյունքում ձևավորված՝ Համակարգերի սպասարկման արժեքների տարբերությունը:

v. Պատվիրատուն Համակարգի սպասարկման սկզբում ցանկություն է հայտնում պակասեցնել Պայմանագրի կնքման պահին ձեռք բերված Աշխատատեղերի քանակը, ապա Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Համակարգերի սպասարկման գինը:

9.8. Պայմանագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

9.8.1. ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

9.8.2. ցանկացած Կողմի նախաձեռնությամբ՝ այդ մասին լուծման պահից առնվազն 30 /երեսուն/ օրացուցային օր առաջ գրավոր կարգով ծանուցելով մյուս Կողմին: Պայմանագիրը լուծված է համարվում ծանուցման ստացման պահից 30-րդ օրը:

9.8.3. Կատարողի նախաձեռնությամբ՝ առանց գրավոր կարգով Պատվիրատուին ծանուցելով, եթե Պատվիրատուն և/կամ Օգտագործողը 6 /վեց/ օրացուցային ամիս անընդմեջ չի շահագործել /օգտագործել/ Համակարգը:

9.8.4. Կատարողի նախաձեռնությամբ, երբ Պատվիրատուի և/կամ Օգտագործողի կողմից խախտվում են Պայմանագրով նախատեսված պարտավորությունները,

9.8.5. Կատարողի նախաձեռնությամբ, երբ Պատվիրատուն և/կամ Օգտագործողը Համակարգը և դրա ընձեռած հնարավորությունները, այդ թվում՝ Ամպային տվյալների պահոցները օգտագործում է Կատարողին դիտավորությամբ վնաս պատճառելու, Համակարգի աշխատանքը խափանելու, կասեցնելու և Պայմանագրի նպատակներից տարբերվող այլ նպատակներով:

9.8.6. Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9.9. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Կատարողը իրավունք ունի հեռացնել Պատվիրատուի և/կամ Օգտագործողի Հաշիվը:

9.10. Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման /լուծման/ դեպքում վաղաժամկետ լուծման վերաբերյալ ծանուցման ստացման օրվա դրությամբ Պատվիրատուի կողմից Կատարողին վճարված գումարները Կատարողի կողմից Պատվիրատուին ենթակա չեն վերադարձման: Կողմերը սույնով ընդունում և հաստատում են, որ չվերադարձված դրամական միջոցները հանդիսանում են Պատվիրատուի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու իրավունքի իրականացման համար Կատարողին վճարման ենթակա փոխհատուցում:

10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

10.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունները մասամբ կամ ամբողջովին չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդ չկատարումն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք է: Անհաղթահարելի ուժ կարող են համարվել այնպիսի հանգամանքները, որոնք ի հայտ են եկել Պայմանագրի կնքումից հետո, անմիջականորեն ազդել են Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման վրա և իրենց բնույթով այնպիսին են, որ չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել դրանց ազդեցությունը վկայակոչող Կողմի կողմից (հրդեհներ, ջրհեղեղներ, երկրաշարժեր, ապստամբություններ, պատերազմներ, ռազմական գործողություններ, համաճարակներ և այլն):

10.2. Պայմանագրով սահմանված պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո ծագած հանգամանքները, նույնիսկ Պայմանագրի 9.1 կետում սահմանված պայմաններին համապատասխանելու դեպքում, չեն կարող համարվել անհաղթահարելի ուժ և հիմք հանդիսանալ Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից ազատվելու համար:

10.3. Անհաղթահարելի ուժ համարվող հանգամանքների առկայության վերաբերյալ ապացույց կարող են հանդիսանալ իրավասու մարմինների կողմից տրված տեղեկանքները:

10.4. Անհաղթահարելի հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համապատասխան:

10.5. Կողմը, որի համար պարտավորության կատարումն անհնարին է դարձել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս կողմին նման հանգամանքների ի հայտ գալու պահից 3 (երեք) շաբաթվա ընթացքում:

10.6. Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, Կողմերից յուրաքանչյուրը իրավունք է ստանում լուծելու Պայմանագիրը: Ընդ որում, Պայմանագրի լուծումը նման հիմքով մյուս կողմի համար չի առաջացնում լուծման հետևանքով վնասների հատուցում պահանջելու իրավունք, սակայն Կողմերը պարտավորվում են Պայմանագրի լուծումից հետո ապահովել, որպեսզի Համակարգի սպասարկման դիմաց արդեն իսկ կատարած վճարումը համարժեք լինի Կատարողի կողմից կատարված պարտավորություններին: Դրանց անհամարժեքության դեպքում նյութական առավելություն ստացող Կողմը պարտավորվում է իր ստացած առավելության չափով հատուցել մյուս Կողմի պահանջները՝ Կողմերի նյութական հավասարակշռությունը պահպանելու համար:

11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11.1. Համակարգի շահագործման ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունները իրականացվում են նախապահանջային եղանակով՝ Պայմանագրի խախտում վկայակոչող կողմից Պայմանագրի ենթադրյալ խախտում թույլ տրված կողմին խախտման վերաբերյալ նախապահանջ ուղարկելու միջոցով:

11.2. Նախապահանջը ստանալու պահից 15 օրացուցային օրվա ընթացքում դրա վերաբերյալ պատասխան չստացվելու կամ ներկայացվող պահանջը մերժվելու դեպքում վեճի լուծումը հանձնվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությանը: Վեճը լուծվում է Պայմանագրով սահմանված պայմանների և Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Համակարգի լոկալ տարբերակից օգտվող և սույն պայմանագրին դեռևս չմիացած Պատվիրատուները/Օգտագործողները կարող են Պայմանագրի պայմանների ընդունմամբ անցում կատարել Համակարգի օգտագործման ամպային տարբերակին՝ օգտվելով Պայմանագրով նախատեսված Համակարգի ֆունկցիոնալ հնարավորություններից և վճարելով ընտրված Սակագնային փաթեթով պայմանավորված արժեքները:

12.2. Ամպային տարբերակին անցնելու դեպքում Պատվիրատուի/Օգտագործողի լոկալ տարբերակում առկա տվյալները փոխանցվում են և պահպանվում են Ամպային տվյալների պահոցներում՝ ընտրված Սակագնային փաթեթով տրված Տեղեկատվության պահոցի և Պատճենների պահոցի թույլատրելի ընդհանուր ծավալին համապատասխան: Ամպային տվյալների պահոցների հավելյալ ծավալների անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն կարող է ձեռք բերել հավելյալ ծավալներ տվյալ պահին գործող Գնացուցակով սահմանված արժեքներին և պայմաններին համապատասխան:

12.3. Համակարգի ամպային տարբերակին անցնելուց հետո լոկալ Համակարգի օգտագործման վերաբերյալ կողմերի միջև կնքված պայմանագիրը շարունակում է գործել այնքանով, որքանով վերջինիս պայմանները չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

12.4. Համակարգի ամպային տարբերակին անցնելուց հետո նախկինում տրամադրված պաշտպանության ապարատային (էլեկտրոնային USB) բանալիները զրոյացվում են և տրվում է համապատասխան ծրագրային (ամպային) բանալի:

12.5. Համակարգի օգտագործման ընթացքում Պատվիրատուի աշխատատեղերի ավելացմամբ պայմանավորված Պատվիրատուն իրավունք ունի Պայմանագրի գործողության ժամկետի պահպանմամբ փոփոխել իր սկզբնական Սակագնային փաթեթը ըստ իր աշխատատեղերի քանակի՝ վճարելով փոփոխման օրվա դրությամբ գործող Գնացուցակով սահմանված արժեքների տարբերությունը:

12.6. Համակարգում կիրառվում են ծրագրային (ամպային բանալի) և ապարատային (էլեկտրոնային USB բանալի) պաշտպանություն: Գնացուցակով նախատեսված արժեքները չեն ներառում էլեկտրոնային USB բանալու արժեքը, որի տրամադրումը իրականացվում է Պատվիրատուի ցանկությամբ և որի արժեքը սահմանվում է Գնացուցակով:

12.7. Համակարգի ամպային տարբերակի օգտագործման ընթացքում կամ Համակարգին միանալուց մեկ տարի հետո Պատվիրատուն իրավունք ունի վերադառնալ Համակարգի լոկալ տարբերակի օգտագործմանը՝ Պայմանագրով սահմանված կարգով պահանջելով և ստանալով Ամպային տվյալների պահոցներում առկա տեղեկատվությունը, ինչպես նաև վճարելով հետագա սպասարկման համար սահմանված արժեքները կամ արժեքների տարբերությունները:

12.8. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ այն կետերի, որոնք թույլատրվում է լրացնել կամ փոփոխել միակողմանիորեն: Բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում Կողմերի լիազոր անձանց կողմից: Կնքված համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

12.9. Պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենսդրություն է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

12.10. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.11. Եթե Պայմանագրի որևէ պայման կամ կետ անվավեր է կամ այդպիսին է ճանաչվում դատարանի կողմից, դա չի ազդում որևէ այլ կետի կամ պայմանի վավերականության վրա:

12.12. Պայմանագրի շրջանակներում բոլոր գրությունների, տեղեկությունների փոխանցումը և ծանուցումները համարվում են պատշաճ, եթե դրանք ուղարկվել են փոստով կամ էլեկտրոնային փոստով՝ ըստ Կողմերի՝ Պայմանագրում նշված տվյալների (հասցեների): Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի կամ նրանցից որևէ մեկի հասցեի փոփոխման դեպքում Կողմերը պարտավորվում են այդ մասին ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց: Նման հաղորդման բացակայության դեպքում

փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված հասցեատիրոջը, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ էլեկտրոնային հասցեն այլևս գոյություն չունի կամ չի պատկանում հասցեատիրոջը:

12.13. Կնքելով Պայմանագիրը՝ Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը տեղեկատվական և գովազդային բնույթի նամակների և նյութերի ստացման համար, որոնք տարածվում են կապի միջոցներով (էլեկտրոնային փոստով, հեռախոսային նամակներով, Viber, WhatsApp հավելվածներով և այլն), ինչպես նաև Կայքի էջերում անձնավորված գովազդային ծանուցումների ներկայացման համար: Նշված համաձայնությունը գործում է մինչև դրա հետկանչը:

13. ԿԱՏԱՐՈՂԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
h/h 2500010002240100
Արմսվիսբանկ ՓԲԸ
Էլ. փոստ՝ support@armsoft.am
Հեռ.՝ +374 (60) 690901, +374 (60) 690000, +374 (60) 690910
ՀՎՀՀ՝ 00807555
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի փ. 1
Տնօրեն Ա. Խաչատրյան

14. ԳՆԱՑՈՒՑԱԿ

ՀԾ-Հաշվապահ

https://www.armsoft.am/?p=hc_hashvapah_gnacucak&c=hamakarger_hc_hashvapah&lang=am

ՀԾ-Առևտուր

https://www.armsoft.am/?p=hc_arevtur_gnacucak&c=hamakarger_hc_arevtur&lang=am

ՀԾ-Վաճառքների Կառավարում

https://www.armsoft.am/?p=hc_vacharqneri_karavarum_gnacucak&c=hamakarger_hc_vacharqneri_karavarum&lang=am